ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Է/40/515-25 առ 06 03 2025թ.

«Դ-Քոմփանի» ՍՊԸ
տնօրեն
Դ. Խանաղյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-133/24-01/310 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Հարգելի՛ պարոն Խանաղյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ռելեների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-133/24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի սեպտեմբերի 29-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-133/24-01/310 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ով (տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում»: Սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող ապրանքները Ձեր կողմից մատակարարված չեն:

Պայմանագրով սահմանված է.

- 1.1 կետ՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ռելեները, լարման ռելեն, լարման վերահսկման ռելեն. մագնիսական գործարկիչը (այսուհետ՝ ապրանք) ...»:

- 2.1.7 կետ՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

- 2.4.1 կետ՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Դ-Քոմփանի» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի

սեպտեմբերի 27-ին կնքված №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-133/24-01/310 պայմանագիրը և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում վճարել պայմանագրի (128 020 ՀՀ դրամ) և որակավորման (192 030 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ-ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կազմեց՝
Հ. Ռամազյան
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հեռ. 010-20-04-91